

և տղեգատեսց որոյ և 22 ամառ յետ չեր բնաւ խօսեցեալ  
ընդ ումեք, և յայնու աւուր հրամայեաց նմա կաթուղիկոս  
և նա հնապանդեալ առ ժամայն բարրառեցաւ»:

Ա. Խ.



Հին ԿՏԱԿԱՐԱՆԻ ԱԶԴԵՅՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒ-  
ԹԵԱՆ ԶՈՐԳԱՅՄԱՆ ԵՒ ԿԵՐՊԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ.

**Ա**րևելագէաների միջազգային ժԳ. համաժողովում, որ  
տեղի ունեցաւ Համբուրգում այս սեպտեմբերի 5—10-ին,  
Հայդելբերգի համալսարանի աստուածաբանութեան պրոֆե-  
սոր հայագէտ Մերքս մի դասախոսութիւն կարդաց՝ «Հին  
Կտակարանի աղդեցութիւնը աիեղերական պատմութեան զար-  
դացման և կերպաւորութեան վրայ» վերնագրով։ Այդ դա-  
սախոսութիւնը ժողովականների կողմից արժանացել է մի  
բոլորովին մասնակի հաւանութեան, ինչպէս յայտնում է  
Hamburger Nachrichten թերթը տալով յիշեալ դասախո-  
սութեան բովանդակութիւնը, որից և մենք առնում ենք։

Այն, ինչ որ մենք համաշխարհային պատմութիւն ենք  
անուանում, այնպիսի կարևոր տեղ է բանում քաղաքա-  
կրթեալ մարդու գիտակցութեան, փիլիսոփայութեան և կրօնի  
մէջ, որ ինքն ըստ ինքեան հարց է ծագում—ինչպէս է ա-  
ռաջ եկել «համաշխարհային պատմութիւն» գաղափարը։ Այս  
գաղափարն իր պատմութիւնն ունի նա դլուխ է եկել հել-  
լենականութեան և երրայականութեան ձուլումով։ Իւրա-  
քանչիւր պատմութիւն ի բնել ազգային է։ Հերոդոտ ար-  
դէն մեծ հետաքրքրութիւն է ցոյց տալիս շրջաբնակ ազ-  
գերի պատմութեան համար՝ թէպէտ նա էլ օտարների մա-  
սին պատմում է միայն այն, ինչ որ յոյների հետ առըն-  
չութիւն ուներ։ Յետազայ յոյն պատմիչները, ինչպէս օրի-  
նակ Քսենոֆոն, Թուկիդիդէս այս տեսակէտով աւելի յա-

ռաջադիմութիւն ցոյց չեն տալիս: Յառաջադիմութիւն ահա նում ենք մենք մանաւանդ յանձին Պոլիբիոսի: Երբ յունականութիւնն արդեն ընկել էր և նա Հռոմում էր ապրում, սկսեց այն միտքը պաշտպանել, թէ պատմութիւնն իսկապէս անտարբեր տենչանքների մի շարք չէ: Պատմութեան մէջ նա մտցնում է մի բարոյական գաղափար, այն դատողութեամբ թէ՝ արդեօք բոլոր ժողովրդների նուածելը Հռոմի իշխանութեան տակ մի բաղդատորութիւն չէ, և թէ՝ հասկանալի չէ պատմութեան մէջ մի զեկավարող զօրութեան դպրութիւնը: Եւ այսպէս աշխատում է նա գէպքերը վու խաղարձ կապակցութեան մէջ հասկանալ, նաև պատմութեան մէջ բաժանում է դիսլուածական պատճառները ներքին իրական պատճառներից: Այդ կերպով նա տարածում է իր հայեացքը ամրող ընդարձակ աշխարհի վերայ, կամենում է մի «ընդհանրական պատմութիւն» զրել: սակայն նա շատ քիչ տեղեկութիւն ունի աշխարհիս չորս կողմերի երկրներից: Յառաջադիմութիւնը նրանումն է, որ այստեղ ազգերը մի բարձրագոյն միութիւն են ներկայացնում, գէպի մի որոշ նրա պատակ ուղղուում:

Այն գաղափարը, թէ Հռոմի պետութիւնը մի իդեալի լրումն է, ուրիշներն աւելի առաջ են տանում: Հարիւր տարի յետոյ, Կեսարի ժամանակ, առաջ է գալիս «կօյնէ յիսաորիա» (ընդհանուր պատմութիւն) գաղափարը, ինչպէս զործ է ածում Գիոդոր, որ Ստոյիկեան գաղափարների հետեւղն է: Նրա կարծիքով, ինչպէս որ աստղերը մի միութիւն են ներկայացնում՝ մի պետութիւն, այնողէս և կայ աշխարհիս զրայ մի ընդհանուր դրութիւն, մի հանրամարդկային պետութիւն: Որի քաղաքացիներն են առանձին առանձին ժողովուրդները: Այս գաղափարն այլևս առաջ չի տարւում: Էպիկտետ ասում է, միանգամայն կրօնական իմաստ տալով իւր խօսքին: թէ բոլոր մարդիկ Ստեղծող ունին՝ մի Աստուած:

Մինչեւ այստեղ էր հասել հեթանոս աշխարհը: Սակայն պակասում էր դեռ այն բոլորը, ինչ որ համաշխարհային պատմութիւնը կարելի է դարձնում, յատկապէս ժամանա-

կազմութիւնը։ Այս միտքն արգեն զբաղեցնում էր Գիոդորին։ Այսպէս փորձեց նա գրել մի յոյն՝ հռոմեական ժամանակագրութիւն։ Մարդական պատերազմից մինչև քաղաքացիների պատերազմը 1138 տարի հաշուելով։ Սակայն այստեղ եղիպատճանն բարելօնեան առորհեստանական անցքերը հաշուի չեն առնուում, որովհետեւ նրանք այս շարքի տակ բերուել չեն կարող։ Արևմուտքի և արևելքի պատմութիւններն իրար հետ կապակցելու կարիքն առաջ եկաւ քրիստոնեաների հեթանոսների հետ շփուելուց յետոյ, երբ Հին Կտակարանը հեղենականութեան կողմից ընդունելութիւն դառւ։ Հրեական պատմութիւնն էլ ազգային է, ունի զրոյցներ և աեզական աւանդութիւններ, առանձին ցեղերի զիւցազներգութիւններ սիրային և ամուսնական պատմութիւններ։ Ապա գալիս է անցումը դէպի ժամանակադրականը, և վերջապէս հիւսիսային և հարաւային պետութիւնների իսկական պատմութիւնը։ Յիշատակելի է, որ Հին Կտակարանի պատմութիւն գրողները դէպի յետ են գնում մինչև իրենց օրէնքի ծագումը, և ապա աւելի ևս յետ Այստեղ է առաջին անգամ ծագում մարդկային սեռի մի լինելու դադարը, որ իւրացնում են յոյները Ա. դարում (Ք. ծ. ա.), և այնուհետեւ պատմութիւնը ընդունուում է իրրե մի ամբողջութիւն։ որի կառավարողն է Աստուծուց տրուած բարոյական ոյժը։ Եւ այսպէս, պատմութեան առարկզը դառնում է ահեղերը, իսկ վախճանը՝ բարոյական նպատակակետը։ Բարոյական աշխարհն իր էութեամբ ըմբոնել—ահանչ է մեր նպատակը։

Շոպեն հառւեր ասում է՝ մարդիկ պարաւոր են պատմութիւնը, ինչպէս բանականութիւն, իրենց առաջնորդ ընտրել։ Աւստի անհրաժեշտ է, որ պատմութիւն գրելիս նախադասուին զեկավարող մաքերը, և ոչ թէ անթիւ անտարբեր դիսուածներ։ Պատմութեան մեջ այս նպատակին հասել են առաջին անգամ Հին Կտակարանի պատմութեան գրուածները։ Նոցանից 800 տարի յետոյ հաղիւ յոյները հասնում են այդ նպատակին։ Զուր տեղ չեն իրենք հրեաները դոցա մարդարէների ձեռքով դրած համարում։ Մար-

գարէների գործունէութեան նպատակն էր ցոյց տալ առառածածային գաղափարի իշխելը, նախախնամութեան պաշտամանութեան ընթացքի մէջ: Արդէն Ամովսը ժիառում է, թէ հրէայ ժողովուրդը միայն ընտրեալ է, ու ըսվչեալ այդ չէր համապատասխանում միասուածութեան համաշխարհային աեսութեան:

Համաշխարհային պատմութեան իրական կողմն էր այս նրա ձեւական կողմը ժամանակագրութիւնն է, որ կազմուում է նոյնպէս այստեղ:

Ա.երջին ժամանակներս շատ է խօսւում Բարելոնի և Աստուածաշնչի (Հին Կտակարան) փոխադարձ յարաբերութեան մասին, իրը տես տեսակ մանրամասնութիւններ մէկը միւսից է փոխ առել: Ար Բարելոնի, Փիւնիկիայի և Խորայէլի մէջ փոխադարձ շփումներ են տեղի ունեցել՝ այդ յայնի էր մեզ վաղուց: Այդ գանում ենք արդէն Բերոսոսի մօտ (Եւսերիսի գրքում): Բեեռագիր արձանագրութիւններն այս տեսակէտով շատ նոր բան չեն երեան հանել: Նախական պատմութեան (Ծննդ. 1—12) ամէն տեսակ առարկայական զուգակշիռների մէջ, որ տալիս է Բարելոնի պատմութիւնը՝ կայ մի հիմնական տարրերութիւն: Բարելացիններն ու Փիւնիկեցիք նիւթապաշտ են և էվոլուցիոնիտու, իսկ Խորայէլացիք նախախնամօզ Աստուծոյ ժողովուրդ: Փլոսկը բերող վաճառականներ կամ ոսկի պեղող հանքագործներ չեն, որոնք ստեղծել են Զեսի կամ Աթենասի իդէալական պատկերը: Ֆիլիպի գլուխութեան է զիւլիս բերել այն, գնելով նրա մէջ իր ստեղծագործող գաղափարը: Նա կստեղծագործէր նաև այն գէպքում, եթէ նրան փոխարէն փղոսկը և ոսկու մարմար և բրոնզ տային: Այսպէս և Հին Կտակարանի պատմիչները նիւթի մէջ մայրել են գաղափարը, և այդ կանէին, եթէ նոյն իսկ ձեռքի տակ չունենային այն նիւթը որ նրանց առաջ էր զրուած, այլ մի ուրիշ նիւթ: Այս գէպքում ուրեմն փոխառութիւնների խնդիրը կարեռ չէ: Իշխող գաղափարները պէտք է ինկատի ունենալ, իսկ մանրամասնութիւնները մի կողմը թողնել:

Հին Կտակարանի ժամանակագրութիւնը միջոց էր գա-

նաղան աղգերի պատմութիւնը միայնելու . իսկ քրիստոնէական ջատադովները պատրաստեցին հելլենական և հրեական պատմութիւնը միայնելու հողը : Հեռում կղեմէս Աղէքսանդրացին, իսկ նոր ժամանակներում Նլայերմախուր պնդում են, թէ քրիստոնէութեան նախադատրաստութեան գործում աշխատել են հաւասար չափով թէ հրեաները և թէ յոյները : Աւսերիսոփ եկեղեցական պատմութիւնն սկսում է «Բանի գործունէութեան Նկարացրութիւնով» . իսկ նրա քրոնիկոնը կազմուած է Հին Կատակարանի հիմնա վրայ, Յուլիան Աֆրիկացու հետևողութեամբ : Այսպիսով Աւսերիսոփ եկեղեցական պատմութիւնը ներկարացնում է մի խառնուրդ յոյն պատմութեան և Հին Կատակարանի պատմական ըմբռնողութեան ու ժամանակագրութեան :

Համաշխարհային պատմութեան գաղափարն արդիւնք է ուրեմն հին – քրիստոնէական վիլխովիայութեան, որը պատմութեան ամբողջութիւնը մի սիստեմի վերածեց : Արարների մէջ չ'ը կարող ծագել համաշխարհային պատմութեան գաղափարը, որովհետեւ նրանց սկակասումը էր մի միայնող սկզբունքը : Իսկամբը բաժանում է րոլոր ժողովուրդներին երկու մասի – նուաճողներ և նուաճուողներ, մինչդեռ համաշխարհային պատմութեան գաղափարը կառուցուել է եղբայրութեան վրայ :

**Ա. Արեգեան.**



Նորեքս լոյս տեսաւ հալեէի համալսարանի աստուածաբանութեան անուանի ուսուցչապետ Փր. Հօօֆսի Տυմբոլիկ (Քաղղաղական Դաւանազիտութիւն) զքքի Ա. հատորը, որ խօսում է Արեւելեան եկեղեցիների ու Կաթոլիկ եկեղեցու մասին (Բ. հատորի մէջ կմտնեն Բողոքական դաւածութիւնները): Իւր տեսակի մէջ նորագոյն եւ ամէնից կա-